

ՀԱՄԱՄԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց Հին Հեղինակների մեջ կան այնպիսիները, որոնք ծանօթ են մեզ միայն անունով, նույն զրուածքները տակաւին լոյս տեսած չեն, որ կարելի լինէր անմիջապէս իմանալ նոցա գաղափարը, ոճը և այլ յատկութիւնները: Այդպիսիներից մէկն է Համամ Արեւելցին, նորա կեանքի և գործունեութեան մասին գրեթէ տեղեկութիւն չունինք: Պատմիչների խօսքերից այսքան գիտենք, որ նա ապրում էր Թ. դարում այն ժամանակ, երբ Հայոց կաթողիկոս էր Տ. Գեորգ Բ. Գառնեցին (875—896 թ.): Իսկ Մխիթար Այրիվանեցին նորա անունն յիշելիս ասում է «Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի»: այս թեմէն յիշատակութիւնից երևում է, որ Համամ Արեւելցին Բագրատունեաց տոհմից էր, Պատմիչները որոշ չեն ասում թէ նա վարդապետ է եղել, Այդպէս մտածելու տեղիք են տուել թերեւս նախ այն, որ Ասողիկի պատմութեան ընթացքից է երևում թէ խօսքը վարդապետների վերայ է, և երկրորդ այն, որ նորա անունով յայտնի զրուածքները մեծ մասով կրօնական բնաւորութիւն ունին: Մեզ յայտնի միակ ձեռագրի ճակատն, ընդհակառակն, այսպէս է. «Մեկնութիւն առակաց Սողոմոնի, զոր արարեալ է Համամայ»: 2 Մխիթար Այրիվանեցու տուած տեղեկութիւնից օգտուելով, կարելի է կարծել, որ Համամի երկրորդ անունն՝ Յոհաննէս՝ յառաջ է եկել այն ժամանակ, երբ նա եկեղեցական է դառել, սակայն պարզ է, որ առաջինն աշխարհական անուն է: Թողնենք այն, որ Հայոց պատմութեան մեջ Հին ժամանակ Արտաշէս Բ. Թագաւորի օրով եղեւ է մի Արծրունի իշխան Համամ 3 անունով: Մենք գիտենք, որ դեռ Ա. դարում կար մի Ամատունի իշխան Համամ 4 անունով, որ Եսայի Աղապատուչցի կաթողիկոսի ժամանակ 785 թուին 12 հազար մարդով փախաւ Արաբացոց իշխանութեան երկրից գէպի Յունաց րաժինն այն պատճառով, որ արաբական ոստիկանը Հայ ժողովրդին հարկերով շատ նեղում էր և իւրաքանչիւրի պարանոցը մի մի կապարեայ կնիք էր դրել իբրեւ նշան ստրկութեան, նոյն

իսկ Թ. դարում երբ, ըստ պատմիչների, ապրում էր Համամ Արեւելցին: Աղուանից աշխարհում որ Հին ժամանակ Արեւելից աշխարհ 6 էլ էր ասում, ապրում և գործում էր «մեծ իշխանն Արեւելից»: 7 Համամ, որ մի այլ յիշատակարանի ասելով մինչև անգամ Աղուանից Թագաւոր եղաւ: 8 այս Համամ իշխանն էր, որ միացաւ Հայոց նախարարների և եկեղեցականների հետ և նոցա հանդանակած ոսկու և արծաթի վերայ իրենն էլ աւելացնելով, Ափշին ոստիկանին փրկանք մճարեց 894 թուին և գերութիւնից ազատեց Տ. Գեորգ Բ. Գառնեցի կաթողիկոսին: Մինչև անգամ Ճորոխի հովտում մի Հին քաղաք ևս կայ, որ յիշուում է դեռ Է. դարում: այդ քաղաքն է Համամաշէն կամ Համշէն դարձեալ մի Համամ իշխանի անունով: 9 թէև անշուրջ միճակի մեջ, այդ քաղաքն այժմ էլ գոյութիւն ունի իբրեւ մի աւան, ուր բնակում են սորանից մի դար ու կէս յառաջ բոնի մահմեդական դարձած հայեր, որոնք դեռ պատուում են իրենց Հին սրբութիւններն, ի թիւս այլոց, և այն փանքն, ուր ըստ աւանդութեան պահուած են Ս. Վարդանանց նշխարները: Այսպէս ուրեմն Համամ աշխարհական անունն է եղել Հին ժամանակ և յաճախ է պատահում մեր պատմութեան մեջ, մինչդեռ եկեղեցականների վերայ այդպիսի անուն չենք տեսնում:

Ինչպէս որ մութն է մեզ համար Համամ Արեւելցու կենսագրութիւնը, նմանապէս անծանօթ են մեզ և նորա զրուածքները, եթէ չենք սխալուում: առաջին անգամ նորա զրուածքների մասին յիշատակութիւն է անում ԺԱ. դարու պատմիչ Ստեփաննոս Ասողիկ. նա ասում է. «Եւ Համամ Արեւելցի, որ զվերլուծութիւն Առակացն գրեաց, և Յովբայ զմիջեդայն թարգմանեաց, և զօրհնութիւնսն, որ ի զլուսն Սաղմոսացն ասացեալ, գիրս մի, և զԱմրիծսն գիրս մի, և վերլուծութիւն քերականին»: նոյնը գրեթէ րազացի կրկնում է ԺԳ. դարու պատմիչ մեծն Վարդան այն տարբերութեամբ, որ ասում է թէ Համամ «գրեաց մեկնութիւն Առակացն և քերականին»: նոյն դարում Մխիթար Այրիվանեցին իւր ժամանակագրութեան մեջ ասում է թէ «մեկնաց զԱռակն և եդ զվերջի գուրդայն»

1. Ստեփ. Ասող. Գ. 2. Վարդան 84. Մխիթ. Այրիվ 55:
2. Ըստ Մայր Յուդակի Մատեն. Ս. Էջմ. Յ. Կարենացիի համար 1117 իսկապէս համար 1158 ձեռագիր Մատեն. Մայր Աթոռոյ:
3. Թովմ. Արծր. Ա. 8:
4. Ղեւոնդ, ԽԲ. Ասող. Բ. 4:

5. Ասողիկի մի այլ ձեռագրի մէջ է Համամ Արեւելցի Գ. 2:
6. Մովսէս Կաղանկ. Բ. 55:
7. Յովհ. կաթ. 64:
8. (Մովսէս Կաղանկ.) Գ. 22. Ասող. Գ. 5. Ստ. Օր. պէլ. ԺԱ. եւ ԺԳ.:
9. Յովհ. Մամիկ. 57. Խնձիմ. Ստոր. Հայ. 524.

ի գլուխ Սաղմոսացն: Գ. Զամչեանն 10 յիշելով այն մատենագիրների անունները, որոնք իրեն ծանօթ են եղել, թէև նոցա գործերն իրեն ձեռքի տակ չէ ունեցել, Սերէոսի, Մովսէս Կաղանկատուացու, Աւետիկի, Ուսումնէսի և ուրիշների կարգում գնում է և Համամի անունն իրեն վարդապետի և թուելով նորա գրուածքները, աւելացնում է թէ արար և զպատմութիւն ինչ ի վերայ ազգիս Հայոց, որ զանց առնէ յիշել Ասողիկ, սոյն տողերի լուսանցքում իրեն աղբիւր նշանակում է նա «Ասողիկ, Ճառքեր, Բիշատակարան», Հին պատմիչների և Գ. Զամչեանի տեղեկութիւնները գրեթէ նոյնութեամբ կրկնում են և նորագոյն հայ և օտար հեղինակները: 11 Փոքր ինչ տարրեր է Հայկազեան բառարանի նախադրուածքի մէջ բերած տեղեկութիւնը, որից երևում է թէ Համամի անունով յայտնի են միայն Առակաց և Ովէդայի մեկնութիւնները: Յովհան Երզնկացու «բերականական խրթին բանք այլաբանութեամբ» և «հատուած շարականի ի ձեռագիրս ինչ», Այս ամենից հետեւում է, որ Համամ Երեւելցու գրուածքներն ամբողջապէս և բնագրով ամենին ծանօթ չեն եղել, որովհետեւ տակաւին ոչ որ նոցա մասին ճիշդ գաղափար չէ տալիս: Բացառութիւն են միայն Հայկազեան բառարանի խմբագրողները, որոնք Առակաց և Ովէդայի մեկնութեանն անմիջապէս ծանօթ են երևում և օրինակներ են բերում: Առակաց ոճը «յստակ և ընտիր» անուանելով, Այսպէս ուրեմն Համամ Երեւելցու գրուածքներն են:

Ա. Սողմոնի առակաց մեկնութիւն.

Բ. Մեկնութիւն Յորայ գրքի ԼԸ. գլխի, որի առաջին խօսքերն են «Ով է դա, որ թագուցանէ զխուրհուրդ»:

Գ. Սաղմոսների վերջին օրհնութիւնների մեկնութիւնը.

Դ. Մեկնութիւն ՃԺԸ. Սաղմոսի, որ սկսուում է «Երանեալ են ամբիժք ի ճանապարհի խօսքերով»:

Ե. Հայոց պատմութիւն.

Զ. Հարական.

և Է. Քերականի վերլուծութիւն:

Թէ ինչպէս այս բաղմագան գործերի հեղինակը, որ Բագրատունեաց տոհմից է և ճանաչուել

է իրեն ի մասսանուն ումն, կարող էր անյայտ մընալ պատմութեան մէջ, այդ մեզ անհասկանալի կը լինի, եթէ մենք առանց քննադատութեան լոկ հաւատ ընծայենք հին և նոր յիշատակարանների վերակալութեանը: Մեզ այնպէս է թուում թէ Համամ Երեւելցու ո՞վ լինելը կը պարզուի ոչ այն հատուկ տորցուցումներով, որ յիշուեցան վերեւում, այլ նորա գրուածքներով: Առ այժմ մեր ձեռքի տակ կայ նորա գործերից երկուսը, այն է մի շարական և Առակաց մեկնութիւնը (թերի): Առաջինն ամբողջապէս գնում ենք այստեղ, իսկ երկրորդից քաղում ենք միայն մի քանի հատուածներ: Հարականի տների գլխատառերն յօդում են հեղինակի անունն՝ Համամ: Նոյնութեամբ արտագրուած է դա Մայր Աթոռի գրչեայ շարականների № 1572 Ա. օրինակից, որ թէև շատ հին չէ, բայց, ինչպէս յիշատակարանից երևում է, օրինակուած է 1328 թուին գրուած մի այլ շարականից, և շատ ընտիր գրչու թիւն է: Ուրիշ շարականների մէջ էլ նոյնը կայ, բայց մենք աւելորդ ենք համարում յականէ յանունէն յիշել, միանման խմբագրութիւն տեսնելով նոցա մէջ: Ահա Համամի շարականի բնագիրը:

«ՀԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՅ».

«Հայր երկնաւոր, անկանխմ առաջի անխակալ քո զթութեանդ. զի մեղաք իմովք բարկացուցի և զչար առաջի քո արարի աղաչեմ ըզքեզ ք ներեա՛ յանցանաց իմոց, որ ք միայնդ ես ողորմած:

Ըրք անաւրէնք կոչեցին զիս հաղորդել արեան մահու, զընացի զճանապարհս ձախակողմանն. կատարեցի ըզար խորհուրդ նոցա. աղաչեմ:

Մեծ են յանցանք իմ Տէր, զոր գործեցի յահէ մահու, հրամանաւ իմայեղեան բռնաւորին երազեցի հեղուլ զարիւն եղբաւրն. աղաչեմ ըզքեմ:

Աստուած ապաւէն և բլոյս զարձելոյս ի քեզ, յարեւէ փրկեա՛ զիս. որպէս թողեր զայն երգողին, թող և ինձ ըզպարտուս մեղուցեալ քո ծառայիս. աղաչեմ:

Մեղայ, Տէր, մեղայ, Մանասէի ձայնիւ դո՛ւնմ, ընկալ զիս, Մարգ սէր, ընդ երանելիացն, որոց թողան և ծածկեցան յանցանքն, աղաչեմ ըզքեմ:

Աչքի առաջ ունենալով այս շարականի բո-

10. Զամչ. Պատմ. Ա. 48. Բ, 689:

11. S. Somal, Quadro d. st. Lit. d. Armeni, 53 և 116. c. Neumann, Vers. e. gesch. d. arm. Literatur, 117. Զարբմանաւան Է. Գ. Հայկ. հին Դպր. պատմ. 738:

վանդակութիւնը, մենք ստիպուած ենք մտածել, որ նորա հեղինակն է «մեծ իշխանն Արեւելից Համամ», որի մասին վերէն յիշուեցաւ: Հարականի բովանդակութիւնն այս է. Համամ երկնաւոր Հօր գթութեանն է զիմում և ներումն խնդրում խոստովանելով իւր յանցանքը:

«Արք անօրէնք կոչեցին զիս հաղորդել արեան մահու»

«Գնացի գնանսսլարնս ծախակողմանն»

«Կատարեցի զչար խորհուրդ նոցա»

«Եւ եմ են յանցանք իմ Տէր, զոր գործեցի յահէ մահու»

«Հրամանաւ իսկայելեան բռնատորին երազեցի հեղուլ զարին եղբօրն»:

Համամի այս խոստովանութիւնից երևում է, որ նա իւր եղբօր արինը թափել է արարական բռնաւորի հրամանով և իւր իսկ մահից երկիւղ կրելով, Այգ խոստովանութիւնն անելուց յետոյ Համամ իւր յոյսը դնում է Աստուծոյ գթութեան վերայ, միտք բերելով Գաւթ և Մանասէ թագաւորներին, որոնք, թէև մեղանշեցին Աստուծոյ առաջ, բայց զղջմամբ թողութիւն գտան. «Անկալ զիս, մարգասէր, աղաղակում է Համամ, ընդ երանելեացն, որոց թողան և ծածկեցան յանցանքն»:

Համամ իշխանի գործերի մասին ժամանակակից պատմիչներից մէկն՝ Յովհաննէս կաթուղիկոսն՝ հաղորդել է այն, ինչ որ նա կատարել էր Տ. Գէորգ Բ. Գառնեցի կաթուղիկոսի աղատութեան համար այդ գործին մասնակից էր և ինքն Յովհաննէս կաթուղիկոսը, սակայն Համամ իշխանի այդ բարեգործութիւնն յիշելով, նա գիտութեամբ թէ մոռացութեամբ չի խօսում Համամի գործած ոճերի մասին, Այգ եղեռնագործութիւնը մեզ յայտնի է լինում մի այլ յիշատակարանից, այն է Մովսէս Պաղանկատուացու պատմութեան շարունակութիւնից, որ գրել է Ժ. գարում Մովսէս Դասխուրանեցին (2): Պատմելով այն, ինչ որ պատմել է և Յովհաննէս կաթուղիկոսը, Դասխուրանեցին նկարագրում է Համամ իշխանի գործերն հետեւեալ կերպով. «Ապա, ասում է, բարեպաշտ Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւնը տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւն. այսք ի միում ժամանակի գործեցան. Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծ ապէս յանցանացն, որ վասն սնոտի այս ր կենցաղոյս

զպարտարեան եղբօրն ժողովեաց յանձն իւր, մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և շրջաւորս առատազուարթ անսպառ կատարէր, որ և զմեծ հայրսպեան Հայոց Գէորգ յանօրէն տաճկաց կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել և յոգնամեծար զնա արարեալ առողջ առ Հայաստանեայս առաքէր (3): Ստեփ. Օրպէլեանի պատմութիւնից իմանում ենք որ Տ. Գէորգ Բ. կաթուղիկոսի գերութեան ժամանակ Աղուանից կաթուղիկոսը փախճանում է և Տ. Գէորգի զրան եպիսկոպոսը Յովնան, որ փախել էր նորա մօտից և եկել էր Աղուանք, ձեռնադրուում է այնտեղի կաթուղիկոս առանց հաւանութեան Տ. Գէորգի այնպէս որ երբ վերջինս գերութիւնից աղատուում է, և տեսնում է Յովնանին կաթուղիկոսացած, «Հրամայէ կողոպտել ի բաց զգգեստ և զձե կաթուղիկոսութեան. վասն որոյ առաջի անկեալ Համամայ, հայցեցէր զներումն: Առ լուեալ նմա վասն մեծի երախտեացն, կրկին ձեռնադրէ զՅովնան արքեպիսկոպոս (իմա կաթուղիկոս) Աղուանից»: Բա. Օրպէլեանի այս խօսքերից երևում է, որ Համամի բարեգործութիւններից մէկն էլ այն է, որ Տ. Գէորգ Բ. կաթուղիկոսին հաշտեցնում է Աղուանից Յովնան կաթուղիկոսի հետ և իւր միջնորդութեամբ վաւերացնել է տալիս նորա իշխանութիւնը՝ շնորհիւ այն երախտի, որ ունէր Տ. Գէորգ Բ. հայրապետի վերայ:

Թէ ո՞վ և ի՞նչ հանգամանքների մէջ ստիպեց Համամին սպանել իւր եղբօրը, ի՞նչ քաղաքական նշանակութիւն ունէր նորա եղբայրն և ի՞նչ էր նորա անունը, պատմական յիշատակարաններից կարելի չեղաւ մի բան իմանալ. Անիերև է սակայն, որ Համամայ անունով մնացած շարականի բովանդակութիւնն համաձայն է Դասխուրանեցու վկայութեանն և հակառակ չէ միւս պատմիչների ցուցումներին, ուստի և կարելի է ասել, որ յիշեալ շարականի հեղինակը նոյն ինքն Արեւելից մեծ իշխանն է Համամ Արեւելցին, Կարող ենք մտածել, որ այնպիսի ծանր ոճի գործող մի իշխան, որ իւր բարի գործերով կամեցել է իսպառ քաւել իւր յանցանքը, ի վերջոյ, թողած լինի թագն ու գայիսունը և կրօնաւորի սրբւմ ընդունած՝ Յովհաննէս անունով, Թէ երբ և ի՞նչպէս տեղի ունեցաւ այդ, մեզ դժուար է որոշել. սակայն որ այդ տեղի է ունեցել, կարող ենք նկատել այն գրուածքներից, որոնք Համամի անունով մնացել են և որոնք մի առ մի կարծես նոյն

13. Մով. Սաղանկ. Գ. 22.

14. Ստեփ. Օրպէլ. ԺԱ. եւ ԺԴ:

զղջման, նոյն ծանր ապաշխարութեան գաղափարն են ամփոփում իրենց մէջ, Սողոմոնի Առակները, ՃԺԸ, Սաղմոսը և Սաղմոսների վերջին օրհնութիւնները մեծ մասով յիշեցնում են մարդու մեղանշանութիւնն և զղջման բարի հետեւանքները, Յորայ գրքի ԼԸ, գլուխը որ մի սքանչելի ներքող է Աստուծոյ մեծութեան վերայ, մարդու անհուն տկարութեան գիտակցութիւնն է յառաջ բերում և ստիպում է Յորայ բերանով խոստովանել թէ «նա ոչինչ եմ, զի՛նչ տաց առ այդ պատասխանի, բայց եթէ ափ ի բերան լինիցիմ, Մի անգամ խօսեցայ և յերկրորդումն ոչ յաւելից 15»:

Սողոմոնի Առակաց մեկնութեան մի օրինակ կայ Մայր Աթոռի մատենադարանում: Համամի աշուտով այլ օրինակ տեսած չենք այստեղ: Յիշուում է, որ 1826 թուին Կ. Պոլսում Համամի մեկնութեան մի ձեռագիր յայտնուել է 16: Բայց մենք մանրամասն տեղեկութիւն չունինք այդ օրինակի մասին: Մայր Աթոռիս գրչեայ օրինակն է № 1138 գիրքը: այնտեղ Համամի մեկնութեան լիակատար վերնագիրն այսպէս է. «Մեկնութիւն Առակաց Սողոմոնի, զոր արարեալ է Համամայ ուրումն իմաստնոյ, Ըստ շնորհաց եղև մեզ հանգիպել պարգևի իմաստութեան, զոր ընկալաք յարգանգի աւագանին, յոր միաւորեալ ընդ Տեառն մերում, առնումք համարձակութիւնն առաջիկայ գրոյս: Թէև այս խօսքերը կարծիք թանաքով միանման ամբողջապէս գրուած են իբրև վերնագիր, սակայն մեզ այնպէս է թուում, որ Համամի խօսքերը չեն առաջին տողերը, այլ նորա գրած վերտառութեան խօսքերն են ըստ շնորհաց եղև և այլն»:

Տուն առ տուն և շատ համառօտ բացատրում է Համամ Առակների իմաստը, որ թէև այնքան էլ ճօն և հասկանալի ոճ չունի, սակայն մեկնութեան ներքին բովանդակութեան մէջ մի ընդհանուր բան կայ, այն է շարունակ զգացնել թէ իմաստութիւն է միշտ Աստուծոյ երկրւոյն աչքի առաջ ունենալ և խորշել հանապազ չար ճանապարհից, Ահա թէ ինչպէս է բացատրում նա Սողոմոնի խօսքերը:

«Որդեակ, մի խաբեսցեն զքեզ արք ամբարիշտը, և մի ակործեսցես երթալ ընդ նոսա, Ըստ զգուշացուցանէ զսոգոս օրինացն Աստուծոյ զմիամիտս, Եւ զհրէական զչար խորհուրդան կանխաւ դուշակէ, որ յաղագս տէրունական մահուան իրք, Որդեակ ասելով և շուրջ անցանելով և յուշ առնել զգիպողական իրեն ամբարշտացն, մի խարիր ի պատրանս մոլորեղոցն ի ճշմարտութենէ, մի կամիցիս ակոր-

ծել առ այնպիսին, որոց լիք են միտք նոցա և խորհուրդքն չարեօք»:

«Եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն, Ե՛կ ընդ մեզ, կցորդ լեր արեան, Որ՞ո՞յ արեան, ոչ վայրապար արգարոյ արեան, յոր սովորքն էին ի բնէ, այլ այնր արեան, որոյ ծածկել չիք հնար որպէս Աբէլին»:

«Զվիճակ քո արկ ընդ մեզ, քսակ հասարակաց ստացո՛ւք ամենեքեան, Որով խաբեալք մատնեցան բազումք մահու և կորստեան և աւանդապահք խաւարի կոչեցան, այդպիսի դառն մեծութեան ըղձացաւ յաշակերտսն թշուառականն Յուդա»:

«Զաստուածային ունելով զիմաստս, Սողոմոն որպէս հայր գթած բարբառի, Որդեակ, ասէ, մի երթայր ճանապարհ ընդ նոսա, Զի թէպէտ Սողոմոն էր, որ զայս ասէր, այլ Հոգին Սուրբ էր, որ նովաւ խօսէր, Խոտորեա՛ ի շաւղաց նոցա, Զի ոչ դոյդն պարտուց վնասակարք և փոքր չարեաց պատճառք, Երագեն ոտք նոցա հեղուլ զարիւն, Զ՞որ արիւն, զայն, որ առաւել խօսի քան ըզՀաբէլին, և զի՛նչ խօսի, և թէ ոչ զանպարտութիւն և զթողութիւն մեղաց դարձելոցն ի նա»:

Ի՛նչ աւելի պարզ հայելի կարող էր լինել՝ Համամի հոգեկան վիճակը պատկերացնող՝ քան այսպիսի մեկնութիւնը, որի ամէն մի խօսքի մէջ ամբարշտութեան, անիրաւութեան, անմեղ արեան և աշխարհային անհաստատ խարուսիկ հրապոյրների թշուառ վախճանն է երևում, Սողոմոնի Առակների բազմաբեղուն իմաստները Համամին աւելի և աւելի ոգևորում են, նորա լեզուին կենդանութիւն են տալիս քարոզելու և ուսուցանելու արդարութեան և առաքինութեան ճանապարհները:

«Ե՛րթ, ո՛վ վատ, առ մըջիւնն, ասում է Սողոմոն, Ա՛յ ի վերին և ոչ ի վայրս գեղեցկութեան, բացատրում է Համամ, առ տեսակա ըղձալեացն, այլ ե՛րթ առ մըջիւնն, որ նուազն է և ի վայր քան զամենայն, Նախանձող լեր նորա ճանապարհացն, ե՛րթ, ասէ, զօրաւորդ, առ անդօրն և տես զիմաստութիւնն գործասիրութեան նորա և ուսիր զիմաստութիւն նորա, թէ ոչ եղև բաւական բարբառն աստուածեղէն, զնա առջի՛ր օրինակ հոգեւոր և մարմնաւոր գործոց»:

«Ե՛րթ առ մեղուն և ուսիր զիմարդ գործունեայ է, Եւ առաճել ի գործս բժշկութեան օգտակար և ցանկալի ամենեցուն, Ինքն նուազ է ի տարրին և փառաւորեալ ի վաստակս, բաց օրինակաւ առ ճշմարտութեան անցուք զրանս, սքանչելի մեղուս աստուածային օրինայն փափագողք և բերող աստ-

ուածային ծաղկացն աստուածախօս մարգարէք և առաքեալք արդ առ այնպիսիսն յդէ զմեզ իմաստունս, ասելով Երթ առ մեղուս գործասէրսն, որք բժշկեցին զհիւանդութիւն բնութեանս քաղցրախօս բարոզութեամբն։

«Մինչև յերբ անկեալ կաս, ո՞վ վատ եկն ինքն որ բժշկէ զհիւանդացեալս և յարուցանէ զանկեալս։ Երբ ի քնոյ զարթիցես ի դռն արտօս անկեալք, քանզի անկեալս և ի քուն զայն կոչէ, որ անկեալքն են յԱստուծոյ վասն որոյ ասէ։ Արի, որ ննջեալ և կանգնեաց, և լուսատու լիցի քեզ Քրիստոս, մի կարի փոքր մի նուաստելով, փոքր մի նիրհելով յանգանելի վարս մարմնականս, և թագուցանես զձեռն ի ծոց քո այսինքն զծածուկ գործս չարին անդեղջ սիրտ ունելով, որով խոտորիցիս ի բարւոյն և հասանէ քեզ օր փառաշանին իրրե զդռն ուղեւոր աղքատութեան, զոր օրինակ աղքատացն մերկութեանն է անգործութիւնն, սոյնպէս և անգործն ի բարեացն աղքատանայ զվերջին աղքատութիւնն, և մերկ ի մեծ ի ձմեռանին լինի, ուր փախուստ ոչ գոյ և եկեցեք քեզ իրրե զաղբիւր ամառն և կարօտութիւն իրրե զչար ինքնահալած փախիցէ։ Դարձեալ գովէ և յարգէ զհաւանեալս պատուիրանին իւրոյ, ապա թէ անդանգաղ և ժրացեալ լինիցին շնորհքն Աստուծոյ իրրե աղբիւր առատութեամբ հեղցի զքեւ, և առաջին վտանգքն բարձցին ի քէն և յառաջագայիլ ի չարութիւն ոչ կարացէ, զի զխաւարն բարձցէ և զլոյսն սփռեցէ։»

Համամի այս բացատրութիւններէց երևում է, որ նա մեղքի արհաւիրքների հանդէպ դնում է զղման և ապաշխարութեան յառաջացուցած քաղցր սփոփանքը, նա ինքն, իւր գործած ծանր ոճիրից սարսափելով, իւր խղճի խայթոցներով միշտ իւր եղբոր անմեղ արիւնն աչքի առաջ տեսնելով, արգարև շատ և շատ կարօտ էր այդպիսի սփոփանքի, Կեանքի քաղցրութիւններն, արքայական փառքի մեծ շուքը, աշխարհային հրապոյրների առօրեայ ժխորը նորա աչքին շատ և շատ աւելի պակաս էին երևում, նա կարօտ էր հոգեկան հանգստութեան նոյն իսկ մենաւոր կեանքի և աղքատութեան պարզեւած բարիքների մէջ, Եւ այդ է պատճառը, որ նա աւելի ընդարձակ է մեկնում Սողոմոնի Առաւկաց այն հատուածները, որոնց մէջ համեմատութիւններ են լինում մեղաւոր և արդար կեանքի պայմանների մէջ, Ահա օրինակները։

«Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղածութեամբ քան զգանձս մեծամեծս աներկիւղութեամբ, Զի երկիւղածք Աստուծոյ խորհին օրինք և գնան պատուիրանք Աստուծոյ, շաղջք լուսոյ, և գանձն գանձս յերկնս, Այլ սիրտ առն, որ մաքրեաց

զինքն անտի, խորհեցի զիրաւունս և զարգարութիւնն Աստուծոյ, զի ուղիղ են գնացք նորա, զի ինքն է տէր փրկելոցն ի լոյս սրբազանիցն առաջնորդ, տանելով ի վերին կայանսն յանձնագործ խորանսն։»

«Լաւ են խոնարհք և հանգարտք սրտի, որ գնան հրամանաւն Աստուծոյ ի լոյս, քան զայն որ բաժանէ դաւարն արտաքին ընդ թշնամանօղսն, իսկ շնորհք Տեառն աւանդին սրբոց, աւարք հոգւոյն, գիւտք արգարոց, զոր ասէ բան իմաստունս և ըզխորհրդականս անմիտս կոչեն, և որ քաղցր են բանիւք աւելի ևս լուիցեն, այնք են, որ զանձինս առ իմաստունս ունենին, և յիմարք գտան, և զիմաստունս անմիտս կոչեն, որք են սուրբ մարգարէքն և առաքեալքն, որ ոչ զմիտս մարդկան ունենին, այլ զՔրիստոսին, և հեղ բանիւք և քաղցր ձայնիւ զևս վեհագոյն լուան, այլ ունելով ի խորոջն զԲանն Աստուծոյ որպէս զաղբիւր կենաց կոչեցան, այսքան մեծապէս ընկալան զշնորհս և հնչէին զիրաւագիտութիւն աւետարանին կենաց։»

«Լաւ են կոչուէք բանջարեղէն՝ սիրով քան զտունս, որ լի են մնով զուարակաց, թշուառութեամբ, Այլ լաւ և նազելի սրբոցն վայելք մարմնոյ պարկեշտագունիցն բանջարք ի վայր խաղաղութեամբ և սիրով հոգւոյն առաւել քան որոց տունք աղմկեալ և լիութիւն մոռց զբոսանօք, անտի են բարք բարկացողք և տգեղք, որք նիւթն զկռիւս և զհնուս մոլորութեան վասն բնական յիմարութեան, որ կրի ի նոսա, բայց որ ի մէջ բանջարեղինացն կոչեցեալ, պարսրեալ նորա յաւետ իմաստիւք և երկայնմտութեան բանին Աստուծոյ, շիջուցանեն զգառատանս չարեաց և զգրգռութիւն ամբարշտացն ցածուցանեն, և ինքեանք բացակային ի մեղացն գնացից և յայրեցանօղ շաւղացն, ճանապարհք կցեալ են փռօք, իսկ որք ժիրք են ի վատակս բարիս և հերկեցին զանդս մտացն և հեղձուցանօղ զփուշ մեղացն քակեցին փութով, որ ի տան վատին ծաղկեն և պտղաբերեն զմահու վիճակ։»

«Լաւ է առն բնակել ի տան միով անկեանս, Տուն զաշխարհս իմանալ, և բնակել ի յանկեանս սորա ի սուրբ եկեղեցւոյ, որ է բնակութիւն Քրիստոսի, Իսկ որ ասէ՝ քան կնոջ անզգամի, անզգամ կին ըզհերձուածօղս և զայլանդակս նշանակէ, յորմէ պարտ է փախչիլ և անկանել յանկիւնս ճամարտութեան, եղեալ այսպիսի անզգամ Մանի անիծեալ, որ իշխեաց ասել թէ ինքն է հոգին, որ տացէ քուր ծաւաւեաց անձանց, նոյնպէս աւետիք բարեաց եկեալ ի հեռաստանէ, Զուր անուանեաց զճամարտութիւն բանաւոր և ինքն Տէրն աղբիւր ջրոյ կենդանոյ, զոր Դաւիթ ասէ, ի քէն է, Տէր, աղբիւր կենաց։»

իսկ անձն ծարաւի (ձեռ. ծաւարի) զհաւատացելոց կոչեաց, որ է անձառ պապեք Բրիտտոսի. իսկ աւետիք բարեաց ի հեռաստանէ եկեալ այս է լուր և աւետիք բարի ծնունդն Բրիտտոսի, որ եկն աւետիք հրեշտակաց ի հեռաստանէ բարձանց, թէ որ զակն աղբեր խնուցու և զեյս ջրոյն ապականիցէ, նոյնպէս անվայելուչ է արդարոյն անկանիլ առաջի ամբարշտի, Անլաք և թուլամիտք, որ ոչ ծանեան զճըշմարիտ բարին և զծագումն արդարութեանն արեգական, նոյնպէս խցին զակն աղբերն անձանց իւրեանց, Հրեայքն աղաղակէին վասն այսր աղբեր թէ Այրն այն ոչ է յԱստուծոյ, խցաւ նոցա և բացաւ հեթանոսաց, այս է ակն աղբերն ի Հօրէ բղխեալ Բանն. իսկ որ ասէ՝ և զեյս ջրոց ապականէ, այս է բան քարոզացն, որ ընկալան զեյս ջրոյն ոգւոյն ի յինքեանս բերելով զաղբիւրն կենաց Հոգւոյն և առատագոյն ելիւք զարժանիսն արեւոյնն, Եւ նոյնպէս անվայելուչ է արդարոյն կալ առաջի ամբարշտին, և զի՛նչ բաժին կայ արդարոյն ընդ անիրաւին, երանելին ասէ Պօղոս, և այս ամենեցուն է. բայց դարձեալ զՏեառն կեան ասէ, որ արդար եկաց առաջի ամբարշտ Պիղատոսի, և Հերօգի անբարբառութեամբ զխորհուրդս անօրինացն կատարէր»

Այսքանն իրեւ ծաղկաբաղ բաւական ենք համարում Սողոմոնի Առակաց մեկնութիւնից յառաջ բերել բանասէրների ծանօթութեան համար, Բնագիրը մի հատ լինելով, բաղդատութեան կէտեր չունինք, ուստի և զժուարանում ենք սոյն բնագրին լիապէս հաւատալ և հետեւել. սակայն պէտք է նշանակենք այստեղ և այն. որ Սողոմոնի Առակաց հայերէն բնագիրը Համամի մեկնութեան մէջ նման չէ մեր տպագրուած օրինակներին, նկատելի են բառերի տարբեր դասաւորութիւն, տարբեր իմաստով նախադասութիւններ և մինչև անգամ զլիակարգութեան տարբերութիւն, Տեղը չէ մանրամասն յառաջ բերել այդ տարբերութիւնները, Իրեւ համառօտ օրինակներ կարող ենք յիշել հետեւեալները.

Տպ. Ա. 12 իրքեւ դժոխք	2եռ. ի դժոխք.
— 21 ի դռունս քաղաքաց	— ի դռնս հօրաց համար.
— 21 համարձակեալ	— ծակեալ
— 22 զնոցոյ իմոյ պատգամս	— զպատգամս նոցոյ իմոյ.
— ԺԷ. 17 — Լաւ են կոշմուք բանջարեղէնց սիրով եւ շնորհիւ քան զտուրս որ լի են մտով զուսգզուարակ խմորոյ թշնամութեամբ:	— Լաւ են կոշմուք բանջարեղէն սիրով քան զտուրս որ լի են մտով զուսգզուարակ խմորոյ թշնամութեամբ:
— ԻԵ. 35 Լաւ է քնակել առ անկեան ի տամաշտոք քան ընդ կնոք բամբասողի ի տան միում:	— Լաւ է առն քնակել ի տան միոյ անկեան քան ընդ ոմեզումս թերի է երեսումս:

Այսպիսի համեմատութեամբ կարելի էր վերականգնել Սողոմոնի Առակաց այն հայերէն բնագիրը, որ Թ. դարում գործածական է եղել. Աչքի առաջ ունենալով, որ Աստուածաշնչի թարգմանութեան ժամանակ Ե. դարում նախ և յառաջ թարգմանուեցաւ Առակաց գիրքը և այդ գործը կատարողն եղաւ Ս. Մեսրոպ Մաշտոց, հետաքրքիր կը լինի Հայոց մատենագրութեան պատմութեան համար թէ ի՛նչ է պատճառն այն տարբերութիւնների, որ նկատելի են, և որն է ճիշտը, եթէ ձեռնհաս անձինք այս գործին օգուտ բերել կամենան, անշուշտ, կը գտնեն մեր գրականութեան մէջ հարուստ պաշար, մանաւանդ եթէ ձեռքի տակ ունենան Հայոց բաղդատութիւն հին մեկնիչների գրուածքները:

Համամ Արեւելցու միւս գրուածքներից ոչ մէկը ձեռքի տակ չունենալով, առ այժմ կանգ առնենք այսքանի վերայ, եթէ յաջողի, մի այլ անգամի թողնելով խօսելու նոցա մասին, Սակայն չենք կարող ուշադրութիւն չգրածնել այստեղ Համամի երկատրութիւններից երկուսի վերայ, Առաջինն է Թորայ գրքի ԼԸ. գլխի մեկնութիւնը (Ովէգա). պատմիչներն այդ գործի վերայ խօսելիս ասում են «զՈվէգայն թարգմանն եւ ց. քնաւ կարելի չէ մտածել, որ այդ նշանակէր մի այլ լեզուից հայերէն դարձնել, քանի որ Թորայ գրքի ամբողջութիւնը բոլոր կտակարանների հետ միասին հայերէն թարգմանուել է Ե. դարում, եթէ այստեղ թարգմանութեան մասին խօսք է լինում, այդ պէտք է ըմբռնել կամ մեկնութեան իմաստով կամ բառացի, եթէ առաջին մոքով հասկանանք, նշանակում է Համամ Արեւելցին Թորայ գրքի ԼԸ. գլուխը այնպէս է բացատրել, ինչպէս արել է Սողոմոնի Առակաց գիրքը, իսկ եթէ բառացի հասկանանք, նշանակում է Համամ Արեւելցին հին Ս. Հայրերից մէկի մեկնութիւնը յուշարեւելցի կամ ասորերէնից թարգմանել է հայերէն, Համամի այդ գործի բնագիրը չունենալով, կարծիք տալ կարելի չէ, Եյստեղ պէտք ենք համարում միայն նշանակել այն, որ Ս. Սիւրբեղ Երուսաղեմացու ճառերից մէկի մէջ բացատրուած է միայն Թորայ գրքի ԼԸ. գլուխը, 16 Անշուշտ, այդ ճառն հայերէն թարգմանուած է աւելի կանոնի ժամանակներում, մենք գիտենք, որ գեռ Ե. դարի վերջերում Գրիգորիս վարդապետ Արշարունի ներսէհ Կամարականի խնդրանք գրեց Անթիքից ու աւ Ե. մեկնութիւնը, 17 որ իսկապէս Ս. Սիւրբեղ Երուսաղեմացու ճառերի բացատրութիւնն է. Գրիգորիսի մեկնութեան վերնա-

16. Կոշում Ընծայութեան, Թ. Եր. 115. Զարքան. Հայկ. Խորգմ. Նախն. Եր. 526.

17. Անողիկ Բ. 2.

գիրն այսպէս է. «Գրիգորի վարդապետի Արշարուն-
եաց եպիսկոպոսի արարեալ մեկնութիւն ընթերց-
ուածոցն Վիւրդի Երուսաղեմացոյ գերաճաճանչ և
սրբազան Հայրապետի 18» Ս. Վիւրդի Առումն Ըն-
ծայութեան գիրքը, որ իրեն մէջ պարունակում է
յիշեալ ընթերցուածները, մի հրահանգ է «յազագս
երախայից» այն է անկոնք քրիստոնեաներին Ս.
Գրոշմի ընդունելութեանը պատրաստելու. Գրիգո-
րիս Արշարունին «երախայից» ընդունելութեան այդ
խրատներն է բացատրում. պէտք է կարծել, որ Ս.
Վիւրդի մեկնութիւնն այն ժամանակ Հայերէն գո-
յութիւն ունէր, որ նորա պարզարանութեան կա-
րտութիւն է զգացել ներսեհ համարականը. Բայց
«երախաներից» զատ կային և կնքաւոր քրիստոնեա-
ներ, երեւի Տին եկեղեցու մէջ լինում էին առան-
ձին մեկնութիւններ այդ վերջինների համար.
Հին գրչեայ ճառքներում աւագ հիւղչաբութի օր-
ուայ ժամակարգութեան մէջ ճաշու ժամի ժամա-
նակ Ծննդոց, Եսայեայ և Գործք Առաքելոցի ըն-
թերցուածներից յետոյ լինում է ընդհատումն. այդ
տեղ այսպիսի նկատողութիւն կայ գրուած իւրեւ
հրահանգ. «յետ այսորիկ ի թ արգմանութիւն
նստին և արձակին երախայքն» (1) պարզ է, որ
այստեղ թարգմանութիւն բառը հոմանիշ է մեկնու-
թեան. և երբ պէտք էր նստել «ի թարգմանու-
թիւն», «երախայքն» արձակում էին. եթէ այս-
պէս հասկանանք, այն ժամանակ կարելի է եղբա-
կանել, որ Համամ Արեւելցին մեկնել է Յորայ գըր-
քի ԼԵ. գլուխն, այլ ոչ թէ թարգմանել. նորա
այդ մեկնութիւնն եղել է ոչ «երախայից», այլ կնք-
աւոր քրիստոնեաների կամ հասունների համար.
Համամից զատ Ուլէգայի մեկնութիւնն արել է
և Ս. Գրիգոր Նարեկացին. եթէ Համամ Թ. դա-
րում այդպիսի մեկնութիւն գրել է, հարկ չկար
որ Թ. դարում նոյն գործին ձեռնարկէր Նարեկա-
ցին. Արգէն ոճին նայելով, անհարազատ են հա-
մարում Նարեկացու այդ գրուածքը 20, որով ա-
ւելի տեղ է մնում հաւատալու, որ Ուլէգայի մեկ-
նիչն Համամ Արեւելցին է:

Երկրորդ հետաքրքիր խնդիրն այն է թէ
Համամ յօրինել է արդեօք Հայոց պատմութիւն և
ի՞նչ բովանդակութեամբ. Աչքի առաջ ունենալով
որ Հայոց պատմիչներից ոչ մէկը Համամի անունը
տալիս յիշում չէ նորա պատմական գրուածքի մա-
սին, և որ մեր տեղեկութիւնն հիմնուած է միմիայն
Մ. Չամչեանի մեղ ծանօթ աղբիւրի վերայ, կար-

ծել, թէ Համամ գրած լինի մի կարգաբանեալ ըն-
դարձակ պատմութիւն, շատ դժուար է. Միևնոյն
ժամանակ նկատելով, որ Յովհաննէս կաթուղիկոսը
լսում է Համամ իշխանի ուրիշ գործերի մասին և որ
Մովսէս Դատիւրանեցին, թէպէտ հարեանցի, յի-
շում է Համամի նախապաճառ լինելն Աղուանից
թագաւորական գահի վերականգնման և այլ դորա
հետ կապ ունեցող իրողութիւնների, որոնց կար-
գումն է, անշուշտ, և Համամի եղբոր սպանման
գործը, պէտք է կարծել, թէ Համամ Արեւելցին
ինքն իւր ժամանակի և իւր իսկ գլխով անցած դէպ-
քերի յիշատակարանն յօրինել է իւր մենաւոր կեան-
քի օրերում, և այդ հաւանական է երեւում այն
պատճառով, որ, ինչպէս տեսանք, նա չէ ծածկել
իւր յանցանքը և յօրինել է մի շարական, իւր կեան-
քի միայն մի դէպքի խոստովանութիւնն անելով.
Եւ եթէ կարող է խօսք լինել Համամի յօրինած
պատմութեան մասին, միմիայն այդպիսի մի յիշա-
տակարան կամ համառօտ տարեգիր պիտի հասկա-
նանք, որն, եթէ յայտնուէր, անշուշտ, Հայոց
նախնի պատմագրութեան համար շատ թանգազին
գանձ կը լինէր:

Չենք շտապում ուրիշ եզրակացութիւնների
դիմելու այս հետաքրքիր հեղինակի որպիսութիւնը
պարզելու համար. Բաւական ենք համարում առ-
այժմ ամփոփել մեր խօսքը հետեւեալ կերպով.

Հայոց պատմիչների տուած տեղեկութիւնները
չեն վերաբերում Թ. դարում ապրող երկու ժա-
մանակակից անձերի, այլ միևնոյն մի անձի, այն
է Արեւելից աշխարհի մեծ իշխան Համամին. որ
Բագրատունեաց տոհմից է. Բուղայ ոստիկանի ար-
շաւանքների և հարուածների ժամանակ, յայտնի
չէ ի՞նչ հանգամանքների մէջ, Համամ իշխանն, իւր
մահից երկիւղ կրելով, «խմայելեան բռնաւորի»
թեկադրութեամբ սպանում է իւր եղբորը. 885
թուին նա Աղուանից թագաւոր է լինում. Ափշին
ոստիկանի յարձակումների ժամանակ նա, երեւի,
լաւ յարաբերութիւն է ունեցել բռնաւորի հետ,
որը Հայոց նախարարներին նուաճելու նպատակով
կալանաւորել էր Տ. Գեորգ Բ. Գառնեցի կաթու-
ղիկոսին և իրեն հետ շրջեցնում էր ամէն տեղ.
894 թուին Ափշին ոստիկանը գերեալ կաթուղիկոսի
հետ միասին արգէն Աղուանից Պարտաւ քաղա-
քում էր, որ Հայոց եկեղեցականներն ու նախա-
րարները ոստիկանի պահանջին համաձայն գումարել
էին ոսկու և արծաթի մեծ քանակութիւն և ու-
ղարկել էին Աղուանից Համամ թագաւորին, որպէս
զի վերջինս վճարէ փրկանք և ազատէ կաթուղիկո-
սին. Համամ ինքն էլ, իւր գանձերից պակասորդը

18. Տես Տին տապաք. Կ. Պօլիս 1728թ.

19. Մեր սեպհական ծնողներ Յաջողք.

20. Հայկ. Դպր. Պոքմ. 529.

լրացնելով, յագեցնում է բանաւորի ազատութիւնը և Տ. Կէորգին ազատելով, մեծ պատիւներ է տալիս, հիւրասիրում է, փառքով ճանապարհ է դնում զէպի Դուին. այդ ժամանակ էր, որ Տէր Կէորգ կամենում էր պատժել Աղուանից նոր կաթողիկոսին՝ Յովնանին. Համամ բարեխօս է հանգիստնում Յովնանի մասին և մեծ հայրապետը, Համամի երախտիքն առ ինքն յարգելով, ներում է Յովնանին. Իբրև եղբայրասպան ոմն՝ Համամ թագաւորն աշխատում է բարի գործերով քաւել իւր ոճիրը. եկեղեցիներին նուէրներ է տալիս և շքաւորներին ողորմութիւններ է բաժանում. Ապա, ինչպէս երևում է, Յուսուփ ոստիկանի ծանր և առնորդըն հարուածների ժամանակ Համամ թագաւորն ընտրում է մեռակեցութիւն և ընգունում կրօնաւորի սքեմ՝ փոխելով իւր անունն Յոհաննէս. Այս կողման մէջ և նուիրում է նա իւր ժամանակը գրաւոր պարագմունքների, նորա գրուածքներից

երկուսի հետ ծանօթացանք արդէն. մէկը շարական է և միւսը Սողոմոնի Առակաց մեկնութիւնը, Դոցանից զատ նա գրել է Ուէգայի, ՃԺԸ, Սաղմոսի և Սաղմոսաց վերջին օրհնութիւնների մեկնութիւնները, Հայոց Պատմութիւն և քերականի վերլուծութիւն.

Հայոց նախնի մատենագրութեան մէջ, ի թիւս այլոց, եղել են և թագակիր հեղինակներ, ինչպէս օրինակ վերջին Կագիկը, հեղինակներ և նախարարական ազնիւ տներից, ինչպէս է Գրիգոր Մագիստրոս և այլք ոմանք. Համամ Արեւելցին այդպիսի գրագէտների կաճառի մէջ իւր երկասիրութիւններով գրաւում է ոչ պակաս նշանաւոր տեղ. Յուսանք որ բանասիրութիւնն հետզհետէ պարզէ այդ ընտիր հեղինակի բազմակողմանի նշանակութիւնն, հանգէս բերելով նորա տակաւին անծանօթ գործերը.

կ. կ.



ՀԱՄԵՄ ԱՍՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

ՊԵՏԱՐԱՐԻՍԻՆ ԱՂԱՒԱՆԻՑ Մ. ԿԱՂ. ԵՒ ԳԻՐԷ ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

(Շարունակութիւն եւ վերջ)

Ա.

ՊԵՏԱՐԱՐԻՍԻՆ ԱՂԱՒԱՆԻՑ.

ԳԻՐԷ ԹՂԹՈՑ.

Ի. «Իսկ¹ գալուստ տաճկին ի հայս եւ գրաւել² զաշխարհն³ ընդ լծով ծառայութեամբ⁴ հարկաց թուականն⁵ հայոց⁶ ՅԻՍԻ. (342) լինէր. Զորոյ ձեռն ըմբռնեալ լինէր⁷ հայրապետն⁸ գէորգ⁹ ի կապանս երկաթի պարփակեալ ածաւ ի պարտաւ. Կ.

Տէր Յունան ը և կէս¹⁰ (ամ). Սա էր զիմա¹¹ եպիսկոպոս և առանց կամաց կաթողիկոսին գէորգայ զայ յԱղուանս. և աստէն ձեռնադրի. զոր նոյն ինքն գէորգ և զսա կըրկին ձեռնադրէ. Ը.

Ի. «Եւ եկաց տեւեաց այսպէս միով հաւանութեամբ զամս. ԸԼԻ. (137) զԺամանակս ԺԺԻ. (14) հայրապետի՝ մինչև ցտէր Գէորգ Հայոց կաթողիկոս:

— Իսկ ապա՝ զօրացեալ բռնութեանն իոմայելացւոց՝ զերեցին զսուրբ կաթողիկոսն Հայոց:

— Իսկ ապա զբան եպիսկոպոսն զոյով նորին Յունան անուն¹ փախեաւ ապստամբողական կարգաւ. անկաւ. յաշխարհն Աղուանից:

Ոչ գոյր հայրապետ Հայոց, որ յուսակնէին ըստ սովորութեան՝ առնուլ ձեռնադրութիւն:

Իբրև մեծահաստութիւն իւրեանց համարեալ և նչիք² զդրան եպիսկոպոս հայրա-

1. Բն. պակասի իսկ. 2. Բն. գրաւելոյ: 3. Բն. զաշխարհս: 4. Բն. ծառայութեան: 5. Բն. դասաւորութեան ԹԺԺԻ. 6. Բն. Յուս. թուին լինէր: 7. Բն. սղեմ: 8. Բն. հայրապետն հայոց: 9. Բն. գրեգորիոս: 10. Սոյն հատուածը տես. Պատմ. Աղ. գիրք. գ. զւ. ըւ. 911:

11. Բ. Տէր յունան ամս. Ը եւ կէս. Ե. օրինակում. պակասի. յիշատակութիւն յունան կաթողիկոսի մասին:

1. Բն. Դունա եպիսկոպոս հայոց:

2. Սոյն հատուածը Պատմ. Աղ. գիրք. գ. զւ. ԺԲ. միայն սոյն գլուխը երկաթագիր օրինում նորոգած եւ բոլորագիր թերթից է:

1. Եւ նորին յունանուն: 2. Նորին Յունան անուն:

2. Բ. եւ նշիք: Հաւանական եմ կարծում Միաբանի կարծիքը որ բառս Փշիկ կամ Քշիկ յատուկ անուան աղաւաղում է: Տես. Պատմ. Աղ. գիրք. գ. զւ. Ը. Սրբասէր Քշիկ Ներսիսեանի վանաց տանտէր. երկրորդ խումբ. Բն. Սրբասէր Քշիկ (թ. Քջիկ) Ներսիսեան վանաց տանտէր. Անու-